Հաստատված է
«ԷՖՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ»
փակ բաժնետիրական ընկերության
Միակ բաժնետիրոջ
13.12.2023թ. N 13-12-23 որոշմամբ
Գործադիր տնօրեն՝ Վաչիկ Գևորգյան

«ԷՖՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԲՐՈՔԵՐԱՅԻՆ (ԴԻԼԵՐԱՅԻՆ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2023

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «ԷՖՐԻՔՈՌ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) բրոքերային (դիլերային) գործունեության կազմակերպման կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) մշակված է Հայաստանի Հանրապետության արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրության, մասնավորապես «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքին, դրա հիման վրա ընդունված այլ նորմատիվ իրավական ակտերին և Ընկերության կանոնադրությանը համապատասխան:

1.2. Սույն Կանակարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են.

1) **«Ածանցյալ ֆինանսական գործիք»**՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3- րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված գործիքներ:
2) **«ԱՀ (Առևտրային հարթակ)»**՝ ցանկացած կարգավորվող շուկա, ինչպես նաև ֆինանսական գործիքների առևտրի կազմակերպման համար նախատեսված կազմակերպություն, համակարգ կամ այլ միջոց, որը որոշակի կանոնների համաձայն, ապահովում է ֆինանսական գործիքների առքուվաճառք և դրա արդյունքում վերջնահաշվարկ իրականացնելու հնարավորություն և միջոցներ:
3) **«Բրոքեր»**՝ ««ԷՖՐԻՔՈՌ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ
4) **«Բրոքերային ծառայություն»**՝ Ընկերության կողմից «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 25-րդ և 26-րդ հոդվածներով նախատեսված ծառայություն:
5) **«Բրոքերային հաշիվ»**՝ բրոքերային ծառայությունների մատուցման նպատակով Ընկերության մոտ Հաճախորդի անունով բացված հաշիվ, որում արտացոլվում են Հաճախորդի միջոցները:
6) **«Գնման/վաճառքի ստոպ պատվեր»**՝ Հաճախորդի կողմից Բրոքերին տրվող Հանձնարարական, որը նախատեսում է Հանձնարարականի կատարում (արժեթղթերի առք/վաճառք) շուկայում ձևավորված գնով (որպես շուկայական)՝ համապատասխան ԱՀ-ում տվյալ արժեթղթի գինը

Հանձնարարականում նշված գնին հասնելու դեպքում, ընդ որում փաստացի կատարման գինը մինչև փաստացի կնքման պահը տեղի ունեցած շուկայական տատանումների արդյունքում կարող է տարբերվել Հանձնարարականում նշված գնից՝ թե՛ հօգուտ Հաճախորդի և թե՛ ի վնաս նրա:

7) **«Գնման/վաճառքի լիմիտային պատվեր»**՝ Հաճախորդի կողմից Բրոքերին տրվող Հանձնարարական, որը նախատեսում է Հանձնարարականի կատարում՝ Հանձնարարականում ֆիքսված գնից ոչ բարձր գնով՝ առքի դեպքում, և ոչ ցածր գնով՝ վաճառքի դեպքում, արժեթուղթ գնելու/վաճառելու պայմանով:

8) **«Գնման/վաճառքի ստոպ լիմիտային պատվեր»**՝ Հաճախորդի կողմից Բրոքերին տրվող Հանձնարարական, որը միաժամանակ ներառում է գնման (վաճառքի) լիմիտային պատվերը մի գնով և գնման (վաճառքի) ստոպ պատվերը մեկ այլ գնով, այն է՝ Հանձնարարականը պարունակում է դրա կատարման հնարավորություն բացառապես համապատասխան ԱՀ-ում համապատասխան արժեթղթի գինը Հանձնարարականում նշված արժեքին հասնելու դեպքում և միևնույն ժամանակ պարունակում է՝

- Հաճախորդի կողմից առքի դեպքում՝ գործարքի կատարման առավելագույն գնի սահմանում,
- Հաճախորդի կողմից վաճառքի դեպքում՝ գործարքի գնի նվազագույն սահմանում:

9) **«Գործակալ»**՝ անձ, որի ներգրավմամբ և միջնորդական ծառայություններից օգտվելու միջոցով Ընկերությունը բրոքերային ծառայություններ է մատուցում հաճախորդին:

10) **«Գործարք»**՝ Ֆինանսական գործիքի օտարման և/կամ ձեռքբերման գործարք, որը կատարվում է Հաճախորդի կողմից Ընկերությանը ներկայացված Պատվերի հիման վրա՝ բացառությամբ սույն Կանոնակարգով նախատեսված դեպքերում Բրոքերային հաշվում բացված դիրքերի հարկադիր փակման դեպքերի:

11) **«Գործարքի էական պայմաններ»**՝ արժեթղթերի տեսակը և թողարկողը (կամ վերջինիս տարբերակիչ ծածկագիրը), գործարքի տեսակը (արժեթղթի առք, վաճառք, ածանցյալով Հաճախորդի իրավունքների իրականացման գործարք, բաժանորդագրության պատվեր, ռեպո, հակադարձ ռեպո), Հանձնարարականով կատարման ծավալը (արժեթղթերի քանակը), միավոր արժեթղթի գնման/վաճառքի/կատարման գնային սահմանափակումները (եթե պատվերը շուկայական չէ):
12) **«Դիլերային գործունեություն»**՝ Ընկերության հաշվին և ընկերության անունից արժեթղթերով գործարքների կատարում:
13) **«Դիրք կամ բաց դիրք»**՝ յուրաքանչյուր Գործարքով Հաճախորդի պահանջների ու պարտավորությունների հաշվեկշիռ՝ արտահայտված արժույթով կամ արժեթղթերով, որը հավասար չէ զրոյի:
14) **«Կարճ վաճառք»**՝ Ֆինանսական գործիքների վաճառք՝ առանց դրանք տիրապետելու:
15) **«Կենտրոնական բանկ»**՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
16) **«Հաղորդագրություն»**՝ ցանկացած տեղեկատվության առաքում, փոխանակում, ծանուցում, Պատվերի ներկայացում, որը տեղի է ունենում Հաճախորդի և Ընկերության միջև կնքված Պայմանագրի շրջանակում:
17) **«Հաճախորդ»**՝ Ընկերության հետ բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիր կնքած անձ:
18) **«Համակարգ»**՝ Գործարքների կնքման հնարավորություն ընձեռող էլեկտրոնային (ցանցային, ինտերնետ) գործիք հանդիսացող ծրագրային փաթեթ (ապահովում)՝ համապատասխան ինտերֆեյսով, որին հասանելիության ապահովումը Հաճախորդին ծառայությունների մատուցման տեխնիկական միջոց է, որի միջոցով Հաճախորդներին հնարավորություն է ընձեռվում ինքնուրույն գործողություններով փոխանցել գործարքների կնքման իրենց պատվերները ի կատարումն:

19) **«Մարժա»՝** Ֆինանսական գործիքների կարճ վաճառք կամ Ֆինանսական գործիքների ոչ բավարար ծածկույթով գնում իրականացնելիս Հաճախորդի սեփական միջոցների և գործարքի ընդհանուր գումարի հարաբերակցությունը, որն ունի տոկոսային արտահայտություն:
20) **«Սկզբնական Մարժա»** ՝ Մարժայի այն չափն է, որն անհրաժեշտ է դիրքը բացելու համար:
21) **«Նվազագույն Մարժա»՝** Մարժայի այն չափն է, որն անհրաժեշտ է դիրքի պահպանման համար:
22) **«Միջոցներ»՝** դրամական միջոցներ (ցանկացած արժույթի) և/կամ արժեթղթեր և/կամ ածանցյալ ֆինանսական գործիքներ, որոնք Հաճախորդը տրամադրել է Ընկերությանն իր Պատվերի կատարման և վերջնահաշվարկի ապահովման նպատակով կամ որոնք առաջացել են (ստացվել են) Հաճախորդի Պատվերը կատարելու արդյունքում, ինչպես նաև այդ դրամական միջոցներից և/կամ արժեթղթերից ստացվող եկամուտներով:
23) **«Ծահագրգիռ անձ»՝** Ընկերության գլխավոր տնօրենը, գլխավոր տնօրենի տեղակալը կամ նման այլ մարմնի ղեկավարը և անդամը, Ընկերության կազմում կամ անունից ներդրումային ծառայությունների մատուցման գործունեություն իրականացնող աշխատակիցները:
24) **«Ոչ բավարար ծածկույթով (Մարժայով) գործարք»՝** Հաճախորդի անունից Հաճախորդի հանձնարարականի համաձայն Բրոքերի կողմից կատարվող, փոխանցվող գործարքներ (կամ գործարքներ որոնց կատարման Պատվերը Բրոքերն ընդունում է Հաճախորդից և հաղորդում է երրորդ անձանց ի կատարումն, այդ թվում՝ որևէ Համակարգի միջոցով), որոնց վերաբերյալ համապատասխան Պատվերը ներկայացնելու պահին Հաճախորդի հաշվին առկա չեն դրանով նրա պարտավորություններն ամբողջությամբ կատարելու համար անհրաժեշտ Միջոցներ և այդ Միջոցները պայմանականորեն կամ իրականում հասանելի են դարձվում Հաճախորդի համար Բրոքերի

կամ Գործակալների կողմից՝ հնարավոր դարձնելով համապատասխան գործարքի կնքումը:

25) **«Պահառության կանոնակարգ»**՝ Ընկերության Պահառուական ծառայությունների մատուցման կանոնակարգ, որը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

26) **«Պայմանագիր»**՝ Բրոքերային ծառայությունների մատուցման համար Հաճախորդի և Ընկերության միջև կնքվող «Բրոքերային ծառայությունների մատուցման և բչեքերային հաշիվների սպասարկման պայմանագիր», որի անբաժանելի մասն է կազմում սույն Կանոնակարգը, Սակագները և Պահառության կանոնակարգը:

27) **«Պատվեր/Հանձնարարական»**՝ Հաճախորդի կողմից Ընկերությանը ներկայացվող և Հաճախորդի Միջոցների հաշվին Ընկերության կողմից կատարման կամ Ընկերության կողմից երրորդ անձանց ի կատարում հաղորդման համար հիմք հանդիսացող փաստաթուղթ, էլեկտրոնային կամ ձայնային Հաղորդագրություն, որի նպատակը Հաճախորդի կողմից Ֆինանսական գործիքի օտարումը, ձեռքբերումը կամ փոխանցումն է:

28) **Սակագներ**՝ Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Բրոքերային ծառայությունների մատուցման սակագներ և/կամ Հաճախորդի հետ համաձայնեցված հատուկ սակագներ՝ առկայության դեպքում:

29) **«Վերջնահաշվարկ»**՝ փոխադարձ պարտավորությունների կատարում, որը սահմանված է Գործարքի կնքման գործող պայմաններով:

30) **«Օրենք»**՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք,

31) **«Ֆիդուցիար պարտականություն»**. Ընկերության պարտականությունն է գործել ի շահ Հաճախորդի՝ դրսևորելով բարեխղճություն և ողջամտություն:

32) **«Ֆինանսական գործիք».** ՀՀ ֆինանսական շուկայի և/կամ օտարերկրյա ֆինանսական շուկաներում շրջանառվող

ցանկացած ֆինանսական ակտիվ, այդ թվում՝ արժեթղթեր (պարտատոմսեր, բաժնետոմսեր, փայեր, դեպոզիտար ստացականներ և այլն), դրամական շուկայի գործիքներ, ածանցյալներ, արժույթ, թանկարժեք մետաղներ և այլն:

33) **«Բացել հաշիվը մոդուլ»**՝ «Էփրիքոթ Կապիտալ» ՓԲԸ վեբկայքի «Բացել հաշիվը» մոդուլ, որի միջոցով իրականացվում են Հաճախորդի և Բրոքերի միջև Պայմանագրի կնքումը, Պայմանագրի և/կամ Կանոնակարգին համապատասխան Բրոքերային և այլ հաշիվների բացումը,

34) **«Իմ հաշիվը մոդուլ»**՝ «Էփրիքոթ Կապիտալ» ՓԲԸ վեբկայքի «Իմ հաշիվը» մոդուլ, որի միջոցով իրականացվում են Պատվերների ներկայացումն ու կատարումը, հաշվետվությունների և /կամ Հաճախորդի կողմից ներկայացված Պատվերների, կատարված գործարքների և այլ տեղեկատվության ներկայացումը, ինչպես նաև Հաճախորդի և Բրոքերի միջև հաղորդակցումն ու հաղորդագրությունների/տեղեկատվության փոխանակումը:

1.3. Կանոնակարգում օգտագործվող և Կանոնակարգի 1.1 կետում չնշված հասկացություններն ունեն Օրենքում և դրա հիման վրա ընդունված այլ օրենսդրական ակտերում սահմանված նշանակությունը, իսկ սահմանված չլինելու դեպքում՝ միջազգային գործարար սովորույթների համաձայն այդ հասկացություններին տրվող նշանակությունը, եթե այլ բան ակնհայտորեն չի բխում կոնկրետ հասկացության կիրառման մասնավոր դեպքից:

1.4. Եթե ակնհայտորեն այլ բան չի բխում սույն Կանոնակարգի որևէ դրույթի կոնկրետ համատեքստից՝ դրանց դրույթների մեկնաբանության սկզբունքներն հետևյալն են՝

1.4.1. ցանկացած փաստաթղթի /ներառյալ, առանց սահմանափակման՝ Պայմանագիրը, Կանոնակարգը, Սակագներ/ վկայակոչումը, մեջբերումը կամ դրան հղումը ենթադրում է տվյալ փաստաթղթի գործող տարբերակի, ներառյալ բոլոր փոփոխությունների ու լրացումների, մեջբերում, վկայակոչում կամ դրան հղում, եթե տվյալ վկայակոչման, մեջբերման կամ հղման մեջ հատուկ նշմամբ այլ բան նախատեսված չէ.

1.4.2. առանձին կետերին բոլոր հղումները վերաբերում են Կանոնակարգի

կետերին, եթե հատուկ նշմամբ այլ բան նախատեսված չէ.

1.4.3. Կանոնակարգի գլուխների անվանումներն ունեն կողմնորոշիչ նշանակություն և չեն ազդում դրանց բովանդակության մեկնաբանման վրա.

1.4.4. եզակի թվով սահմանված հասկացություններն արտահայտում են նույնի հոգնակի թիվը ու հակառակը, եթե այլ բան չի բխում հասկացության կոնկրետ կիրառման դեպքից.

1.4.5. ցանկացած անձի վկայակոչումը վերաբերվում է նաև ժամանակ առ ժամանակ վերջինիս փոխարինող անձին, նրա ներկայացուցչին և/կամ իրավահաջորդին.

1.4.6. «սույն պայմանագիր» և «Պայմանագիր» բառի (հասկացության) օգտագործումը վերաբերում է Պայմանագրին, ներառյալ՝ Կանոնակարգին, Պահառուական կանոնակարգին և Սակագներին.

1.4.7. Կանոնակարգում օգտագործվող «սույնով», «սույնում», «սույնի համաձայն», արտահայտությունները և նման նշանակություն ունեցող այլ բառերը վերաբերում են տվյալ դրույթը պարունակող կետին:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1. Ընկերության գործադիր մարմնի ղեկավարը իր որոշմամբ սահմանում է Պայմանագրի օրինակելի ձև:

2.2. Պայմանագիրը /ներառյալ՝ Կանոնակարգը, Պահառուական կանոնակարգը և Սակագները/ հանդիսանում են հրապարակային առաջարկ (օֆերտա), որը համարվում է Հաճախորդի կողմից ընդունված (ակցեպտավորված)՝

2.2.1. Ընկերության կողմից սահմանած ձևանմուշով Պայմանագիրը Հաճախորդի կողմից ստորագրելու/կնքելու պահից: Ընդ որում Հաճախորդի կողմից պայմանագրի ստորագրումը պետք է հավաստվի Ընկերության կողմից, որը կարող է իրականացվել Ընկերության ներկայացուցչի ներկայությամբ այն ստորագրելու կամ Ընկերության՝ «Առանց առերես շփման գործարար հարաբերությունների հաստատման» ներքին ընթացակարգով սահմանված կարգով:

2.2.2. Ընկերության կողմից սահմանած ձևանմուշով Պայմանագիրը

«Էփրիքոթ Կապիտակ» ՓԲԸ վեբկայքում Բացել հաշիվ մոդուլի միջոցով Հաճախորդի կողմից ստորագրելու և Պայմանագրի կնքման հաստատումը Բրոքերի կողմից ստանալու պահից:

2.3. Պայմանագրի կնքումը և հաճախորդի հետագա սպասարկումն իրականացվում են Ընկերության «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» Կանոնակարգով սահմանված ընթացակարգերի պահպանմամբ:

2.4. Պայմանագրի կնքման դեպքում Բրոքերը պարտավորվում է Կանոնակարգով սահմանված կարգով և պայմաններով, Սակագներով սահմանված վճարի դիմաց Հաճախորդին մատուցել հետևյալ ծառայությունները (այսուհետ՝ առանձին- առանձին և բոլորը միասին՝ Ծառայություններ».

2.4.1. արժեթղթերի այդ թվում՝ ածանցյալների շուկայում, բրոքերային ծառայություններ,մասնավորապես.

1) Հաճախորդի հանձնարարականների ընդունում վերջինիս հաշվին արժեթղթերով գործարքներ կատարելու վերաբերյալ և դրանց ի կատարում փոխանցելն այլ անձանց:
2) Հաճախորդի հանձնարարականների հիման վրա, Հաճախորդի հաշվին, սակայն իր անունից արժեթղթերով գործարքների կատարում:
3) Հաճախորդի հանձնարարականների հիման վրա արժեթղթերով գործարքների կնքում վերջինիս հաշվին և վերջինիս անունից /ընդ որում՝ ընդ որում, Բրոքերը գործարքները կնքում է Հաճախորդի անունից այն դեպքերում, երբ Բրոքերի կարծիքով Հաճախորդի անունից գործարքի կնքումը վերջինիս համար ապահովում է առավել բարենպաստ պայմաններ և թույլատրված է առևտրային համակարգի (այսուհետ՝ ԱՀ) կանոններով:

2.4.2. Ոչ բավարար ծածկույթով (մարժայով) Կանոնակարգի 2.2.1 կետում նշված ծառայություններ՝ Բրոքերի կողմից հաստատման դեպքում և կարգով:

2.4.3. Ծառայությունների առնչությամբ պահառուական ծառայություններ և գործառնություններ:

2.4.4. Ծառայությունների մատուցման և դրա ներքո գործարքների կնքման

համար պահանջվող վերջնահաշվարկի (settlement) իրականացում՝ Հաճախորդի հաշվից փոխանցելով և հաշվին մուտքագրելով գործարքների կատարման համար պահանջվող և դրանց արդյունքում ստացվող միջոցները, ներառյալ՝ ըստ անհրաժեշտության տրամադրելով/փոխանակելով վերջնահաշվարկի համար պահանջվող արժույթ՝ Կանոնակարգում նշված պայմաններով և կարգով:

2.4.5. Բրոքերի կողմից Հաճախորդին մատուցված Ծառայությունների, այն է՝ կատարված գործարքների, ինչպես նաև Հաճախորդից ընդունված և ի կատարում փոխանցված հանձնարարականներով այլ անձանց կողմից կատարված գործարքներով միջոցների շարժի, վերաբերյալ Հաճախորդին հաշվետվությունների տրամադրում:

2.4.6. ՀՀ օրենսդրությամբ և/կամ ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդունված կանոնակարգերով Բրոքերի կողմից մատուցվող/կատարվող այլ ծառայություններ/գործառույթներ:

2.5. Պայմանագրի կնքմամբ Հաճախորդի համար բացվում է Բրոքերային հաշիվ: Բրոքերային հաշվի բացման վերաբերյալ տեղեկացումը Հաճախորդին է ներկայացվում Պայմանագրի կնքման ժամանակ Հաճախորդի կողմից նշված տեղեկատվության փոխանցման հուսալի միջոցով:

2.6. Պահպանելով Հաճախորդի նկատմամբ իր ֆիդուցիար պարտականությունները՝ Բրոքերը սույն Պայմանագրի համաձայն ծառայություններ մատուցելիս առանց Հաճախորդի համաձայնության կարող է օգտվել երրորդ անձանց ծառայություններից: Հաճախորդի Հանձնարարականները կատարելու համար Բրոքերն իր հայեցողությամբ իրավունք ունի ներգրավել նաև այլ կազմակերպություններ, այդ թվում՝ արժեթղթերի շուկայում մասնագիտացված անձանց, ինչպես նաև օգտվել միջազգային և տեղական շուկաներում այլ կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայություններից և ԱՀ- ներից, եթե Հաճախորդի հանձնարարականում չի նշված այն կոնկրետ միջնորդը, որի հետ Բրոքերը պայմանագրային հարաբերություններ է հաստատել:

2.7. Ընկերությունը հաճախորդներին բրոքերային ծառայություններ մատուցելիս առաջացող շահերի բախման դեպքերում առաջնորդվում է Ընկերության «Շահերի բախման բացառման և կանխարգելման» Կանոնակարգի

պահանջներով:

3. ԵՐԱՇԽԻՔՆԵՐ ԵՎ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐ

3.1. Պայմանագրի և սույն Կանոնակարգի շրջանակներում Բրոքերը երաշխավորում է, որ՝

3.1.1. պատշաճ իրավունակությամբ և գործունակությամբ օժտված անձ է և իրավասու է Հաճախորդի հետ կնքել Պայմանագիր,

3.1.2. առկա են Բրոքերի կողմից բրոքերային ծառայություններ մատուցելու համար անհրաժեշտ բոլոր լիցենզիաները և թույլտվությունները,

3.1.3. Բրոքերի անունից Պայմանագիրը ստորագրող անձինք իրավասու են ստորագրել այն և այդպիսով Բրոքերի համար ստեղծել, փոփոխել և դադարեցնել Պայմանագրից բխող իրավունքներ ու պարտականություններ:

3.2. Պայմանագրի ստորագրմամբ Հաճախորդը հաստատում և հավաստիացնում է հետևյալը.

3.2.1. Հաճախորդը իր գրանցման (քաղաքացիության) երկրի օրենսդրության /անձնական օրենքի/ համաձայն պատշաճ իրավունակությամբ և գործունակությամբ օժտված անձ է և իրավասու է կնքել Պայմանագիրը, իր անունից ձեռք բերել իրավունքներ ու պարտականություններ:

3.2.2. Պայմանագիրը ստորագրող անձն իրավասու է ստորագրել/հաստատել այն Հաճախորդի անունից համաձայն կիրառելի օրենսդրության և Հաճախորդի կանոնադրության ու ներքին իրավական ակտերի (իրավաբանական անձի դեպքում), ինչպես նաև այդպիսի ստորագրությամբ/հաստատմամբ Հաճախորդի համար ստեղծել, փոփոխել ու դադարեցնել իրավաբանական ուժ ունեցող իրավունքներ և պարտականություններ:

3.2.3. Պայմանագրի շրջանակներում գործարք կնքելու համար Բրոքերի կողմից օգտագործվող Հաճախորդի արժեթղթերը և դրամական միջոցներ ծանրաբեռնված չեն երրորդ անձանց իրավունքներով, ստացվել են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն փողերիլվացման, ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց

վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ, միաժամանակ համաձայնելով, որպեսզի Բրոքերն իրականացնի բոլոր անհրաժեշտ գործողությունները, որոնք պահանջվում են ըստ ահաբեկչության ֆինանսավորման և փողերի լվացման դեմ պայքարի մասին օրենսդրական և Բրոքերի ներքին իրավական ակտերի, և միայն հաշվի բացումն արգելող հիմքերի բացակայության դեպքում բացի/ակտիվացնի նշված բանկային հաշիվ(ներ)ը:

3.2.4. Պայմանագրով/Կանոնակարգով իրեն մատուցված Ծառայությունների դիմաց վճարները և ծառայությունները մատուցելու համար Բրոքերի կրած այլ ծախսերը անակցեպտ կարգով Բրոքերի կողմից գանձվեն Բրոքերային հաշվից, Բրոքերի մոտ բացված և սպասարկվող հաշիվներից, ինչպես նաև Հաճախորդի բանկային այլ հաշիվներից:

3.2.5. Մինչև Պայմանագրի կնքումը/հաստատումը նախապես ծանոթացել է Պայմանագրի, Կանոնակարգի և Սակագների բովանդակությանն ու պայմաններին, ծանոթացել/ծանոթանալու է Պայմանագրի շրջանակներում կամ ի կատարումն Պայմանագրի իր կողմից ներկայացվող/ներկայացված արժեթղթերի ձեռքբերման/օտարման/տնօրինման ցանկացած Գործառնությունների և Հանձնարարականների բովանդակությանը, իր կողմից ներկայացվող Գործառնություններից և Հանձնարարականներից յուրաքանչյուրի մասով հաստատում է, որ տեղեկացված է և տիրապետում է Գործառնությունների և Հանձնարարականների ներկայացման և/կամ դրանցում նշված արժեթղթերի վերաբերյալ որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ ամբողջական տեղեկատվությանը, ներառյալ, սակայն չսահմափակվելով այդ արժեթղթերի տեղեկատվական թերթիկին, ազդագրին, առաջարկի պայմաններին, սահմանափակումներին և պահանջներին, և համապատասխանում է Հանձնարարականների ներկայացման /արժեթղթերի ձեռքբերման/օտարման և/կամ տնօրինման համար սահմանված ցանկացած և բոլոր պահանջներին:

4. ՊԱՏՎԵՐՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Ընկերությունը Հաճախորդի հանձնարարականները կատարում է կամ հաղորդում է երրորդ անձանց ի կատարումն միայն այն դեպքերում, երբ Հաճախորդի Բրոքերային հաշվում առկա են այդ Պատվերներում նշված գործարքի վերջնահաշվարկի կատարման և Ընկերության նկատմամբ Հաճախորդի պարտավորությունների մարման համար բավարար Միջոցներ, բացառությամբ այն դեպքերի, երբ կատարվում է կամ ի կատարումն է հաղորդվում/փոխանցվում Մարժայով գործարքի կնքման Պատվեր:

4.2. Գործարք կնքելու համար Հաճախորդը Բրոքերին է ներկայացնում Հանձնարարական, որը պետք է պարունակի Գործարքի էական պայմանները: Հանձնարարականում նշվում է նաև Հանձնարարականի տեսակը (շուկայական, լիմիտային, ստոպ լիմիտային և այլն), ինչպես նաև Հանձնարարականիվավերության (կատարման ենթակա լինելու) ժամկետները՝ արտահայտված օրերով կամ մինչև հետկանչում: Հանձնարարականի տեսակը նշված չլինելու դեպքում այն համարվում է Ծուկայական պատվեր: Հանձնարարականի վավերության ժամկետ նշված չլինելու դեպքում այն վավեր է մինչև տվյալ ԱՀ-ում՝ գործարքի կատարման Պատվերը ներկայացնելիս կամ դրանից հետո սկսված առաջին Առևտրային նստաշրջանի ավարտը:

4.3. Հաճախորդի միջոցներով Գործարքների կնքման համար հիմք է հանդիսանում սույն Կանոնակարգի Հավելված 1-ով սահմանված Հանձնարարականի ձևին համապատասխան լրացված թղթային, ինչպես նաև Գործարքի էական պայմանները պարունակող՝ Պայմանագրում նշված էլեկտրոնային փոստով, էլեկտրոնային հաղորդակցության ցանցի միջոցով կամ հեռախոսով Բրոքերին հաղորդված կամ Իմ Հաշիվը մոդուլով ներկայացված Հանձնարարականները:

4.4. Էլեկտրոնային փոստով Հանձնարարական ներկայացնելը նախընտրելիս՝ Հաճախորդը գիտակցում է, որ Բրոքերից անկախ տեխնիկական և այլ հանգամանքները հաշվի առնելով, բացառված չէ, որ ուղարկված Հանձնարարականը չի հասնի Բրոքերին, նրան կհասնի ուշացումով, ուղարկված լինի համապատասխան լիազորություն չունեցող երրորդ անձանց կողմից կամ վերջիններիս հայտնի դարձած լինի այլ միջոցներով, այդ թվում ցանցային խափանումների, ցանցային չարտոնված մուտքերի, գաղտնաբառերի չարտոնված օգտագործման և այլ միջոցներով ու եղանակներով: Սույնով Կողմերը համաձայնում են, որ Բրոքերը ոչ մի դեպքում պատասխանատվություն չի կրում

սույն կետում նշված իրադարձությունների արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար, իսկ Հաճախորդի՝ Պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեից ստացված Հանձնարարականը Բրոքերի կողմից դիտարկվելու է որպես Հաճախորդից պատշաճ ստացված Հանձնարարական:

4.5.Հաճախորդի կողմից Հանձնարարականը էլեկտրոնային հաղորդակցության միջոցով ներկայացնելու դեպքում Հաճախորդը կարող է հավաստիանալ Բրոքերի կողմից Հանձնարարականը ստանալու փաստի վերաբերյալ հեռախոսազանգի և Բրոքերի լիազոր աշխատակցի հետ հեռախոսազրույցի միջոցով, որի ընթացքում լիազոր ներկայացուցիչը հաստատում է կամ հերքում նույն զրույցի ընթացքում Հաճախորդի կողմից նկարագրված էական պայմաններով գործարք կնքելու էլեկտրոնային Հանձնարարականի ընդունման փաստը: Նշված փաստը Հաճախորդի համար կարող է հավաստել նաև էլեկտրոնային փոստի համապատասխան օպերատորը՝ հաճախորդի կողմից ուղարկվող էլեկտրոնային հաղորդագրությունների ստացումը համապատասխանող հետադարձ ծանուցման ռեժիմ ընտրելու դեպքում, որի հավաստիության համար սակայն Բրոքերը պատասխանատվություն չի կրում:

4.6.Հեռախոսով փոխանցվող Հանձնարարականները ձայնագրվում են Բրոքերի կողմից և սույնով հաճախորդը տալիս է իր համաձայնությունը Բրոքերի հետ իր հաղորդակցությունների փոխանակման ձայնագրությանը: Հեռախոսով հանձնարարական ընդունելիս Բրոքերի լիազորված աշխատակիցը իրավունք ունի իր հետ կապ հաստատած անձի ինքնությունը ճշտելու նպատակով վերջինիս ուղղել դրա համար անհրաժեշտ հարցեր, այդ թվում հարցնել Հաճախորդին տրամադրված անհատական հաշվի համարը, Պայմանագրի վավերապայմանները և Հաճախորդի նույնականացման համար անհրաժեշտ այլ հարցեր, և Հանձնարարականը ընդունել միայն այն դեպքում, երբ ստացված պատասխանների հիման վրա Հաճախորդը նույնականացվում է:

4.7.Հեռախոսով փոխանցված Հանձնարարականը ներկայացնելիս Հաճախորդը արտասանում է 4.2 կետում նշված պայմանները, որից հետո Բրոքերի լիազորված անձը կրկնում է դրանք, իսկ Հաճախորդը «հաստատում եմ» բառի արտասանմամբ հաստատում է Բրոքերի լիազոր ներկայացուցչի կողմից Հանձնարարկանի պայմանները ճշգրիտ ընկալելու փաստը:

4.8.Հաճախորդի կողմից Հանձնարարականը թղթային ձևով Բրոքերին

ներկայացվում է երկու օրինակից առձեռն առաքմամբ, ընդ որում մեկ օրինակը մնում է Բրոքերի մոտ, իսկ մյուս օրինակը «հանձնարարականը ընդունված է» նշագրմամբ և Բրոքերի ստորագրությամբ վերադարձվում է Հաճախորդին:

4.9. Հաճախորդը պարտավորվում է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, այդ թվում նաև փոփոխել Ընկերության աշխատակցի կողմից տրամադրված գաղտնաբառը, և իրականացնել պատշաճ վերահսկողություն, որպեսզի բացառի իր իրավասու էլեկտրոնային հասցեներին կամ այլ կապի միջոցներին /հաղորդակցման եղանակներին/ և/կամ Իմ հաշիվը մոդուլին համապատասխան իրավասություն չունեցող անձանց /ոչ իրավասու անձանց/ կողմից մուտքը և/կամ նրանց հասանելիությունը: Համապատասխանաբար, Բրոքերը պատասխանատվություն չի կրում այն բոլոր դեպքերի համար, երբ Հաճախորդի և/կամ նրա Հանձնարարականների վերաբերյալտեղեկատվությունը հասանելի է դարձել նման իրավասություն չունեցող անձանց և/կամ Հանձնարարականը կամ այլ հաղորդագրությունը տրամադրվել է Հաճախորդի անունից, սակայն նման լիազորություն չունեցող անձանց կողմից ու կատարվել է Բրոքերի կողմից, պայմանով, որ Բրոքերը Հաճախորդի/Հաճախորդի անունից հանդես եկող անձի ինքնության ստուգման և նույնականացման, ինչպես նաև իրավասությունների ստուգման նպատակով ձեռնարկել է Կանոնակարգի 11.5 կետով նախատեսված ողջամիտ քայլերը: Բոլոր դեպքերում Հաճախորդի կապի միջոցների /հաղորդակցման եղանակների/ և/կամ Իմ հաշիվը մոդուլի չարտոնագրված մուտքի կամ ապօրինի հասանելիության հետևանքով առաջացած բոլորիրավական ռիսկերն ու հետևանքները (ներառյալ՝ իրավասության կամ լիազորության սահմանազանցման ռիսկը) կրում է Հաճախորդը:

4.10. Պատվերի ընդունումը, ընդունված Հանձնարարականի կատարումը և/կամ ի կատարում հաղորդումը մերժվում է, եթե՝

4.10.1. այն չի ներկայացվել պայմաններով սահմանված կարգով, ձևով և բովանդակությամբ

4.10.2. Ընկերության մոտ հիմնավոր կասկածներ են առաջացել Հանձնարականը ներկայացնող անձի՝ այն ներկայացնելու իրավասություն ունենալու վերաբերյալ՝ ինքնությունը պարզելու համար Պայմանագրով և սույն Կանոնակարգով սահմանված գործողությունները կատարելու արդյունքում,

4.10.3. Գործակալները մերժում են համապատասխան Հաճախորդի կողմից ներկայացված և Ընկերության կողմից իրենց հաղորդված Հանձնարականի ընդունումն ի կատարումն և/կամ կատարումը՝ հաշվի առնելով նրանց կողմից որոշակի շուկաներում և ԱՀ-ներում գործարքների կնքում/կատարումը ապահովելու հնարավորության բացակայությունը,

4.10.4. Ընկերության համար իրենից անկախ ցանկացած պատճառով օբյեկտիվորեն անհնարին է դարձել Հանձնարարականի կատարումը կամ դրա հաղորդումն ի կատարումն,

4.10.5. Համապատասխան ԱՀ-ի կամ Գործակալների կողմից սահմանվում կամ կիրառվում են Հանձնարարականի կատարումը անհնարին դարձնող արգելքներ կամ սահմանափակումներ:

4.11. Ընդհանուր առմամբ ավելի լավ արդյունք ապահովելու նպատակով Ընկերությունը կարող է համախմբել Հաճախորդի Հանձնարարականը կամ իր հաշվին կատարվող գործարքն իր մեկ այլ հաճախորդի հանձնարարակնի հետ և այդ ձևով կատարել դրանք, եթե՝

1) որևէ հաճախորդի համար այն չի ապահովում ավելի վատ արդյունք, քան այն դեպքում, եթե նրա պատվերը կատարվեր առանձին,
2) ընդհանուր առմամբ այն բխում է Հաճախորդի շահերից:

4.12. Եթե Ընկերությունն իր հաճախորդի պատվերը համախմբում է իր հաշվին կատարվող գործարքի հետ, ապա այդ համախմբված պատվերի մասնակի բավարարման դեպքում նախապատվությունը տրվում Հաճախորդին՝ բացառությամբ, եթե այլ բան է նախատեսված կողմերի գրավոր համաձայնությամբ: Տվյալ պարգայում սակագներն հաշվարկվում են համամասնորեն:

4.13. Հաճախորդն իրավունք ունի ներկայացնել տրված Հանձնարարականի հետկանչի Հաղորդագրություն: Հաղորդագրությունը ընդունվում է ի կատարումն, եթե տվյալ հետկանչվող Հանձնարարականով Ընկերության կողմից դեռևս Գործարքի կնքման հայտը կամ օֆերտան չի բավարարվել և/կամ ակցեպտավորվել: Հանձնարարականի հետ կանչման հաղորդումը համարվում է ընդունված Հաղորդագրությունը Ընկերությանը հասնելու պահից: Հաճախորդի հետկանչման Հաղորդագրությունը ստանալու պահից մինչև Ընկերության կողմից համապատասխան Հանձնարարկանով համապատասխան ԱՀ-ից գործարքի

կնքման հայտը հետ կանչելու հաստատվելն ընկած ժամանակահատվածում Հանձնարարականին համապատասխան Գործարքը կնքվելու դեպքում, Հանձնարարականը հետ կանչելու մասին հաղորդագրությունը Ընկերության կողմից չի կատարվում:

4.14. Ընկերությունն իրավունք ունի մերժել ընդունված Հանձնարարականի կատարումը նաև այն դեպքերում, եթե Հանձնարարականն ընդունելուց հետո պարզվում է, որ Հաճախորդի հաշիվներում առկա չեն բավարար միջոցներ (բացառությամբ Մարժայով կնքվող Գործարքների)՝ Հանձնարարականը կատարելու և այդ Հանձնարարականի կատարման համար սահմանված վճարները գանձելու համար, ընդ որում՝ Ընկերությանն իրավունք է վերապահվում անակցեպտ կարգով, առանց Հաճախորդին նախապես ծանուցելու, գանձել Հաճախորդի Բրոքերային հաշիվներում առկա Միջոցները՝ վերջինիս կողմից տրված Հանձնարարականի հիման վրա կնքված Գործարքի Վերջնահաշվարկն ապահովելու նպատակով: Հանձնարարականը կարող է չկատարվել նաև այն դեպքում, եթե Հաճախորդի հաշիվներում առկա միջոցները ծանրաբեռնված են այլ անձանց իրավունքներով կամ արգելադրված են:

4.15. Հանձնարարականի կատարումը մերժելու դեպքում Ընկերությունն այդ մասին անհապաղ տեղեկացնում է Հաճախորդին էլեկտրոնային փոստով, Իմ հաշիվը մոդուլի, Ընկերության հեռախոսային հավելվածի միջոցով կամ հեռախոսով՝ համապատասխան ծանուցում ուղարկելու միջոցով:

4.16. Կախված շուկայի տեսակից (բորսայական, արտաբորսայական, կարգավորված կամ ոչ) և վայրից, գործարքի բնույթից և կատարման ժամկետներից՝ Ընկերության տնօրենի կողմից կարող են սահմանվել Հանձնարարականի ներկայացման և հետ կանչման վերջնաժամկետներ, որոնք ենթակա են հրապարակման Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում և որոնց խախտմամբ ներկայացված Հանձնարարականը կամ հետ կանչման Հաղորդագրությունը չի կատարվում: Նշված վերջնաժամկետները հանդիսանում են սույն Կանոնակարգի բաղկացուցիչ անբաժանելի մասը և պարտադիր է կողմերի համար:

4.17. Գործարքներ կնքելու համար ԱՀ-ների կամ Ընկերության Գործակալների կողմից մեկ Հանձնարականով գնվող/վաճառվող Ֆինանսական գործիքների նվազագույն քանակական/ծավալային սահմանափակումներ սահմանված լինելու դեպքում այդ

սահմանափակումները տարածվում են նաև Հաճախորդի Հանձնարարականների վրա, որի մասին Ընկերությունը տեղյակ է պահում Հաճախորդին:

4.18. Հաճախորդն ընդունում է, որ Հանձնարարականներով ձեռքբերման ենթակա Ֆինանսական գործիքների շրջանակը, Գործարքների ծավալները, Հանձնարարականների ներկայացման վերջնաժամկետները սահմանափակվում են Ընկերության՝ նշված Գործարքների կատարումը ապահովող Գործակալների և ԱՀ-ների կողմից սահմանված արժեթղթերի ցանկով, ծավալային սահմանափակումներով (սահմանաչափերով) և Պատվերների ներկայացման (կատարման) ժամկետային սահմանափակումներով: Ընդ որում՝ տվյալ ԱՀ-ում առևտրային օրվա ավարտից հետո և մինչև մյուս առևտրային օրվա սկսվելը ներկայացված Շուկայական պատվերը ենթակա է կատարման կամ ի կատարումն հաղորդման միայն տվյալ ԱՀ-ի կանոններով սահմանված առևտրային օրվա ընթացքում:

4.19. Այն դեպքում, երբ Ընկերության և Հաճախորդի շահերի միջև առաջանում է բախում, Ընկերությունն առաջնահերթությունը տալիս է Հաճախորդի շահերին՝ առաջնորդվելով Ֆիդուցիար պարտականությամբ:

4.20. Հաճախորդը կարող է էլեկտրոնային փոստով (հեռախոսազանգով Հաճախորդի կողմից պարտադիր հավաստմամբ), Իմ հաշիվը մոդուլի, հեռախոսային հավելվածի միջոցով Մարժայով գործարք կնքելու Հանձնարարական ներկայացնել և այդ նպատակով Ընկերությունից ստանալ դրամական կամ արժեթղթերի փոխառություն, եթե նման հնարավորություն է նախատեսված Ընկերության հետ կնքված պայմանագրով:

4.21. Հաճախորդի Բրոքերային հաշվում վերջինիս սեփական Միջոցները մարժայի պահանջվող պահպանման սկզբնական չափից (Սկզբնական մարժա) պակաս լինելու դեպքում Ընկերությունն էլեկտրոնային փոստով և/կամ Իմ հաշիվը մոդուլի, և/կամ հեռախոսային հավելվածի միջոցով Հաճախորդին տեղեկացնում է Բրոքերային հաշվում Մարժայի պահանջվող պահպանման չափի համալրման անհրաժեշտության մասին:

4.22. Ընկերությունն իրավունք ունի չընդունել և ի կատարումն չփոխանցել Հաճախորդի հետագա Հանձնարարականները, մինչև այն պահը, երբ Հաճախորդի Բրոքերային հաշվում առկա սեփական Միջոցները կգերազանցեն Մարժայի Սկզբնական չափը:

4.23. Հաճախորդի կողմից գնված և վաճառված Ֆինանսական գործիքների (երկար և կարճ դիրքեր) հանրագումարի մասով վերջինիս Բրոքերային հաշվում սեփական Միջոցները մարժայի պահանջվող նվազագույն չափից (Նվազագույն մարժա) պակաս լինելու դեպքում Հաճախորդի ստանձնած պարտավորությունների բավարարման նպատակով Ընկերությանն իրավունք է վերապահվում առանց Հաճախորդի համաձայնությունը հայցելու փակել Հաճախորդի բաց դիրքը՝ գնելով/վաճառելով համապատասխան Ֆինանսական գործիքը:

4.24. Առաքում նախատեսող ֆյուչերսային պայմանագրերի դեպքում մինչև ֆյուչերսային պայամանագրի կատարումը Բրոքերն իրավունք ունի առանց հաճախորդից Հանձնարարական ստանալու փակել Ֆյուչերսային պայմանագրի գծով հաճախորդի դիրքը: Սույն կետում նշվալ տարբերակով ֆյուչերսային դիրքի փակման համար հաճախորդից գանձվում է տվյալ ֆյուչերսային պայմանագրով կատարվող գործարքների համար Սակագներով սահմանված վճարը:

4.25. Արժեթղթերով առքուվաճառքն իրականացվում է «Առաքում վճարման դիմաց» (DVP) կամ «Ազատ առաքում» սկզբունքով:

4.26. Ընկերության հաճախորդների կողմից ներկայացված Հանձնարարականները ենթակա են առաջնահերթ կատարման Ընկերության դիլերային հայտերի նկատմամբ:

4.27. Կարգավորվող շուկայում գործարքները կնքվում և կարգավորվում են Օրենքի, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի և այդ շուկայի օպերատորի կողմից սահմանված կանոնների համաձայն:

4.28. Չկարգավորվող շուկայում Ընկերության կողմից գործարքները կնքվում և կատարվում են Օրենքի և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի համաձայն:

4.29. Բրոքային հաշիվներում առկա դրամական միջոցների (այն չափով, որով դրանք ծանրաբեռնված չեն ընդունված և/կամ կատարված Պատվերով, Ընկերության կամ երրորդ անձանց իրավունքներով) և Պայմանագրի համաձայն Ընկերությանը վճարման ենթակա գումարների տարբերությունը հանդիսանում է Հաճախորդի նկատմամբ Ընկերության անժամկետ պարտավորությունը:

4.30. Բացառությամբ Հաճախորդի Հանձնարականի հիման վրա կնքված Գործարքի Վերջնահաշվարկի ապահովման դեպքերի՝ Բրոքերային հաշիվներից միջոցներ կարող են դուրս գրվել դատարանների օրինական ուժի մեջ մտած վճիռների

հիման վրա, ինչպես նաև օրենսդրությամբ և/կամ Հաճախորդի հետ կնքված Պայմանագրով սահմանված դեպքերում:

4.31. Բրոքերային հաշվով գործարք կատարելու լիազորություն ունեն նույն անձինք, որոնք իրավասու են Ընկերությանը ներկայացնել Հանձնարարականներ Հաճախորդի հետ կնքված Պայմանագրի համաձայն:

5. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

5.1. Եթե Ընկերությունը կատարել է հաճախորդի Հանձնարարականը, ապա պետք է անհապաղ, սակայն ոչ ուշ, քան մինչև գործարքի կնքման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը հաճախորդին տրամադրի Հանձնարարակնի կատարման մասին հաշվետվություն:

5.2. Հաճախորդի Հանձնարարականի կատարման մասին հաշվետվությունը առնվազն ներառում է՝

5.2.1. Ընկերության անվանումը,

5.2.2. Հաճախորդի անունը, ազգանունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը) կամ հաճախորդին նույնականացնող համարը,

5.2.3. Գործարքի կնքման ամսաթիվը՝ հաջորդաբար նշելով օրը, ամիսը, տարին,

5.2.4. Գործարքի կնքման ժամը՝ հաջորդաբար նշելով ժամը և րոպեն,

5.2.5. Հաճախորդի կողմից տրված Հանձնարարականի տեսակը (շուկայական, լիմիտային և այլն),

5.2.6. Գործարքի կնքման վայրը (նշվում է ֆոնդային բորսայի անվանումը, այլ կարգավորվող շուկայի անվանումը կամ «չկարգավորվող շուկա»),

5.2.7. Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը, թողարկման համարը (բացակայության դեպքում՝ թողարկողի անվանումը և արժեթղթերի տեսակը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը),

5.2.8. Հանձնարարականում նշված գործարքի տեսակը (առք, վաճառք),

5.2.9. Հանձնարարականի բնույթը, եթե Հանձնարարականում նշված գործարքի տեսակը առք կամ վաճառք չէ (արժեթղթերի բաժանորդագրության, օպցիոնի իրականացում, ռեպո, հակադարձ ռեպո և այլն),

5.2.10. Արժեթղթերի քանակը (ծավալային արժեթղթերի դեպքում անվանական արժեքը),

5.2.11. Միավորի գինը (ծավալային արժեթղթերի դեպքում չի լրացվում),

5.2.12. Ընդհանուր ծավալը,

5.2.13. Գանձվող միջնորդավճարների կամ այլ վճարների համախառն գումարը, իսկ ոչ պրոֆեսիոնալ հաճախորդի պահանջի դեպքում՝ նաև դրանց բացվածքը (ըստ յուրաքանչյուր վճարի),

5.2.14. Հաճախորդի կողմից վճարումները կատարելու պայմանները և ժամկետը, եթե դրանց մասին հաճախորդը նախօրոք չի տեղեկացվել (բանկային հաշվեհամարը և այլն),

5.2.15. Տեղեկատվություն այն փաստի մասին, որ հաճախորդի տեսանկյունից գործարքի մյուս կողմը հանդես է եկել Ընկերությունը, վերջինիս խմբի մեջ մտնող որևէ այլ անձ կամ Ընկերության մեկ այլ հաճախորդ, եթե գործարքը չի իրականացվել այնպիսի կարգավորվող շուկայում, որն ապահովում է գործարքի մի կողմի անհայտ լինելը մյուսի համար,

5.2.16. Հաշվետվության ներկայացման ամսաթիվը:

5.3. Եթե հաճախորդի Հանձնարարականը կատարվում է մասնաբաժիններով, ապա Ընկերությունը հաճախորդին է ներկայացնում Հանձնարարականի կատարման մասին հաշվետվությունը՝ ըստ յուրաքանչյուր մասնաբաժնի:

5.4. Սույն կանոնով սահմանված հաշվետվությունները հաճախորդին ներկայացվում են առձեռն հանձնելու, իսկ Հաճախորդի ցանկցության դեպքում՝ Տեղեկատվության փոխանցման հուսալի միջոցով Հաճախորդին ուղարկելու միջոցով:

6. ԴԻԼԵՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1. Ընկերության անունից և հաշվին իրականացվող գործարքների (այսուհետ՝ Դիլերային գործարք) կատարման առաջարկները կազմվում են Ընկերության համապատասխան որակավորում ունեցող աշխատակցի կողմից (այսուհետ՝ Դիլեր) և ներկայացվում են Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի հաստատմանը:

6.2. Նախքան Դիլերային գործարքի կատարումը Դիլերը հավաստիանում է Ընկերության համապատասխան հաշիվներին անհրաժեշտ դրամական միջոցների և արժեթղթերի առկայության մեջ:

6.3. Դիլերային գործարքի կատարումից հետո Դիլերը Ընկերության գործադիր մարմնի ղեկավարին է ներկայացնում գործարքի կատարման վերաբերյալ հաշվետվություն, իսկ Ընկերության հաշվապահական գործառնություններն իրականացնող ստորաբաժանմանը տեղեկություններ է փոխանցում Դիլերային գործարքից բխող հաշվապահական ձևակերպումների իրականացման համար:

7. ՊԱՏՎԵՐՆԵՐԻ և ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

7.1. Ընկերության բրոքերային պատվերների և գործարքների մասով գրանցումները ներառում են համապատասխան տեղեկությունները՝ կապված Ֆինանսական գործիքներով կատարված բոլոր գործարքների հետ :

7.2. Սույն Կանոնակարգի 7.1 կետում նշված գրանցումները պետք է կատարվեն Պատվերների ստացման պահից հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը:

7.3. Հաճախորդի կողմից տրված յուրաքանչյուր պատվերի մասին գրանցումները առնվազն ներառում են հետևյալ տեղեկությունները՝

7.3.1. հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը) կամ հաճախորդին նույնականացնող համարը,

7.3.2. հաճախորդի կողմից տրված պատվերում նշված գործարքի տեսակը (առք, վաճառք),

7.3.3. հաճախորդի կողմից տրված պատվերի բնույթը, եթե պատվերում նշված

գործարքի տեսակը առք կամ վաճառք չէ (արժեթղթերի բաժանորդագրության պատվեր, օպցիոնի իրականացման պատվեր և այլն),

7.3.4. հաճախորդի կողմից տրված պատվերի տեսակը (շուկայական, լիմիտային և այլն),

7.3.5. արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (բացակայության դեպքում՝ թողարկողի անվանումը և արժեթղթի տեսակը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը),

7.3.6. արժեթղթերի քանակը,

7.3.7. միավորի գինը,

7.3.8. ընդհանուր ծավալը,

7.3.9. հաճախորդի կողմից տրված առանձնահատուկ ցուցումները (առկայության դեպքում),

7.3.10. հաճախորդի կողմից տրված պատվերի ստացմանն շգրիտ ժամանակը՝ հաջորդաբար նշելով օրը, ամիսը, տարին, ժամը և րոպեն,

7.3.11. պատվերը գրանցող շահագրգիռ անձի անունը, ազգանունը:

7.4. Գործարքների մասով գրանցումները պետք է վարվեն այնպիսի եղանակով կամ միջոցներով, որպեսզի բավարարվեն հետևյալ պայմանները.

7.4.1. Կենտրոնական բանկի պահանջով այդ գրանցումները պետք է հասանելի և մատչելի լինեն Կենտրոնական բանկին և պետք է հնարավոր լինի վերծանել կատարված յուրաքանչյուր գործարքի յուրաքանչյուր փուլ,

7.4.2. այդ գրանցումներում փոփոխություններ կամ լրացումներ են կատարվում, ապա դրանք պետք է կատարվեն այնպես, որպեսզի հնարավոր լինի պարզել այդ գրանցումների սկզբնական բովանդակությունը և յուրաքանչյուր փոփոխությունը կամ լրացումը, և

7.4.3. պետք է բացառվի երրորդ անձանց կողմից այդ գրանցումների չթույլատրված օգտագործումը:

7.5. Ընկերությունը վարում է գրանցումներ Հաճախորդի կողմից տրված յուրաքանչյուր Հանձնարարականի մասով:

7.6. Հաճախորդի Պատվերը կատարելուց հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան մինչև տվյալ աշխատանքային օրվա ավարտը, պետք է կատարվեն գրանցումներ կատարված գործարքի մասին:

7.7. Սույն Կանոնակարգի 7.6 կետի համաձայն կատարվող գրանցումները ներառում են հետևյալ տեղեկությունները.

7.7.1. Հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը) և (կամ) հաճախորդիm նույնականացնող համարը,

7.7.2. Գործարքի կնքման ամսաթիվը՝ հաջորդաբար նշելով օրը, ամիսը և տարին,

7.7.3. Գործարքի կնքման ժամը՝ հաջորդաբար նշելով ժամը և րոպեն,

7.7.4. Գործարքի տեսակը (առք, վաճառք),

7.7.5. Գործարքի բնույթը, եթե գործարքի տեսակը առք կամ վաճառք չէ (արժեթղթերի բաժանորդագրություն, օպցիոնի իրականացում, ռեպո, հակադարձ ռեպո և այլն),

7.7.6. Արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը (բացակայության դեպքում թողարկողի անվանումը և արժեթղթերի տեսակը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը),

7.7.7. Արժեթղթերի քանակը (ծավալային արժեթղթերի դեպքում՝ անվանական արժեքը),

7.7.8. Միավորի գինը (ծավալային արժեթղթերի դեպքում չի լրացվում),

7.7.9. Ընդհանուր ծավալը,

7.7.10. Գործարքի մյուս կողմը,

7.7.11. Գործարքի կնքման վայրը (նշվում է ֆոնդային բորսայի անվանումը, այլ կարգավորվող շուկայի անվանումը կամ «չկարգավորվող շուկա»),

7.7.12. Գործարքը կատարող Շահագրգիռ անձի անունը, ազգանունը:

7.8. Ռեպո և հակադարձ ռեպո գործարքների դեպքում, բացի սույն Կանոնակարգի 7.7 կետում նշված տեղեկություններից պետք է գրանցվեն նաև.

7.8.1. Գործարքի ավարտման ամսաթիվը,

7.8.2. Գործարքի տվյալների փոփոխման ամսաթիվը (եթե կատարվել է նախկինում կնքված գործարքի պայմանների փոփոխություն),

7.8.3. Ռեպո ուղղակի գործարքի գումարը,

7.8.4. Ռեպո հակադարձ գործարքի գումարը,

7.8.5. Ռեպոյի տարեկան տոկոսադրույքը,

7.8.6. գործարքի ժամկետը՝ օրերով:

8. ՄԱՏՈՒՑՎԱԾ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԸ

8.1. Պայմանագրի համաձայն մատուցվող ծառայությունների դիմաց Ընկերությունը Հաճախորդից գանձում է վճարներ՝ ըստ Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի կողմից սահմանված Բրոքերային ծառայությունների մատուցման սակագների:

8.2. Սակագները կարող են միակողմանիորեն փոխվել Ընկերության կողմից և ուժի մեջ են մտնում Հաճախորդին այդ փոփոխության մասին ծանուցելու և Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելու օրվանից 20 օր հետո:

8.3. Հաճախորդը պարտավոր է հատուցել Ընկերության կողմից Հաճախորդի Հանձնարարականների կատարման և/կամ ի կատարումն հաղորդման հետ կապված գործառնական ծախսերը, որոնք կարող են առաջանալ Ընկերության Գործակալների կողմից երրորդ անձանց ներգրավմամբ գործարքներ կնքելու և վերջնահաշվարկ ապահովելու անհրաժեշտությունից, մասնավորապես՝ ԱՀ-ների և/կամ այլ միջնորդների կողմից Գործակալներից գանձվող վճարները (բացառությամբ Գործակալների հետ Ընկերության կնքած Պայմանագրերով սահմանված սակագներով գանձվող ստանդարտ միջնորդավճարների), որոնք կարող են տարբեր լինել՝կախված ԱՀ-ից, գործարքի տեսակից, ծավալից և այլ հանգամանքներից: Նման ծախսերը արտացոլվում են Ընկերության Գործադիր մարմնի կողմից հաստատած Բրոքերային ծառայությունների մատուցման սակագներում: Հաճախորդին ներկայացվող հաշվետվություններում արտացոլվում են թե՛ նշված ծախսերը, և թե՛ դրանց հատուցման համար Ընկերության կողմից իրականացված գանձումներն ու պահումները:

8.4. Եթե Ընկերությունն օրենսդրության համաձայն պարտավոր է իրականացնել Հաճախորդի հարկային Գործակալի գործառույթները, ապա գանձում և փոխանցում է Հաճախորդի կողմից վճարման ենթակա համապատասխան հարկերը:

8.5. Սույն Կանոնակարգում և Պայմանագրում նշված վճարները, ծախսերի հատուցումները, տոկոսները, տույժերն ու տուգանքները և Հաճախորդի՝ Ընկերության նկատմամբ ցանկացած այլ տեսակի ֆինանսական պարտավորությունների գումարները Ընկերությունն իրավասու է անակցեպտ գանձել Հաճախորդի Բրոքերային հաշվում առկա Միջոցներից, իսկ Հաճախորդը պարտավոր է ապահովել համապատասխան Միջոցների առկայությունը Բրոքերային հաշվում: Հաճախորդի հաշվին արժեթղթերի առկայության դեպում Հաճախորդի՝ սույն Կանոնակարգում և Պայմանագրում նշված վճարները, ծախսերի հատուցումների, տոկոսների, տույժերի ու տուգանքների, ինչպես նաև Ընկերության նկատմամբ ցանկացած այլ տեսակի ֆինանսական պարտավորությունների գումարները գանձելու նպատակով Ընկերությունն իրավասու է իրացնել այդ արժեթղթերը դրանց շուկայական իրացվելի գնով՝ գործադրելով լավագույն ջանքեր Հաճախորդի համար առավել բարենպաստ պայմաններով դրանք իրացնելու համար: Այդուհանդերձ Բրոքերը պատասխանատվություն չի կրում արժեթղթերի իրացման գնի առնչությամբ Հաճախորդի կողմից անհամաձայնություն հայտնելու դեպքում:

9. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԱՐԺԱՅԻ) ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1. Ընկերությունը կարող է իր հաճախորդներին տրամադրել փոխառություններ Ֆինանսական գործիքներով գործարքների իրականացման համար, պայմանով, որ Ընկերությունը հանդիսանում է նման գործարքի կողմ:

9.2. Ընկերությունը կարող է հաճախորդներին տրամադրել փոխառության հետևյալ տեսակները.

9.2.1. Ֆինանսական գործիքների կարճ վաճառք, որի դեպքում հաճախորդը Ընկերության միջոցով վաճառում է Ընկերությունից փոխառությամբ վերցված Ֆինասական գործիքները,

9.2.2. Ֆինանսական գործիքների մարժայով գնում, որի դեպքում հաճախորդը Ընկերության միջոցով գնում է Ֆինանսական գործիքները՝ գնման համար անհրաժեշտ գումարի մի մասը փոխառությամբ վերցնելով Ընկերությունից:

9.3. Սույն Կանոնակարգի 9.2 կետում նշված փոխառության տեսակների տրամադրման ժամանակ սահմանվող Մարժայի նվազագույն չափը սահմանվում է 5 (հինգ) տոկոս:

9.4. Յուրաքանչյուր Ֆինանսական գործիքի համար նախատեսված Մարժայի կոնկրետ չափը, ինչպես նաև դրամական և արժեթղթերի տեսքով տրամադրվող փոխառությունների նկատմամբ կիրառվող տոկոսադրույքները Հաճախորդների համար հասանելի են դարձվում Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում և/կամ Ընկերության կողմից տրամադրված ծրագրային տերմինալում: Երբ Հաճախորդի միջոցները նվազում են Սկզբնական մարժայի սահմանաչափից Հաճախորդը ծանուցվում է այդ մասին: Հաճախորդի միջոցները Նվազագույն Մարժայի չափիչ նվազելու դեպքում Ընկերությունն իրավունք ունի Հաճախորդի դիրքերի փակման միջոցով ապահովել Մարժայի Սկզբնական սահմանաչափը:

9.5. Հաճախորդներին արժեթղթերով գործարքների իրականացման համար փոխառությունների տրամադրումը իրականացվում է Հաճախորդի կողմից Պայմանագրում համապատասխան նշում կատարելու դեպքում:

9.6. Առանձնահատուկ դեպքերում, կախված Գործակալների կողմից Ընկերությունից փոխանցված պատվերների կատարման առանձնահատկություններից, Ընկերությունն իրավունք ունի Հաճախորդի Պատվերի կատարման համար անհրաժեշտ արժույթով դրամական միջոցների ապահովման համար առանց Հաճախորդի հանձնարարականի (ավտոմատ եղանակով) Գործակալի միջոցով Հաճախորդի հաշվին իրականացնել արտարժութային փոխարկում և/կամ կնքել կարճաժամկետ փոխարժեքային սվոփ պայմանագրեր:

9.7. Սույն Կանոնակարգի 9.6 կետի սահմանված սվոփ գործառնությունների կնքման դեպքում Ընկերությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Հաճախորդին է ներկայացնում այդ գործարքի էական պայմանները ներառող հաշվետվություն:

10. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՁԵՌՆԱՐԿՎՈՂ ՔԱՅԼԵՐԸ

10.1. Ընկերությունում հաճախորդների Միջոցների պաշտպանությունը ապահովելու նպատակով ձեռնարկվում են հետևյալ միջոցառումները.

1) առանձնացված հաշվառում. Ընկերությունն առանձին հաշիվներ է վարում յուրաքանչյուր հաճախորդի, ինչպես նաև իր և իր հաճախորդների Միջոցների հաշվառման համար,

2) ներքի աուդիտ. Ընկերության ներքին աուդիտի գործառույթների մեջ է մտնում Ընկերության գործառնական գործունեության հետ կապված ռիսկերի ուսումնասիրումը նվազագույնի հասցնելով Ընկերության աշխատակիցների կողմից պատահական սխալների և չարաշահումների ռիսկը,

3) Պատվերների կատարման հստակ քաղաքականության կիրառում,

4) Ընկերության և հաճախորդների, ինչպես նաև Ընկերության տարբեր հաճախորդների շահերի բախման սահմանափակման քաղաքականության կիրառում,

5) Մասնակցություն ներդրողների փոխհատուցման, միջոցների երաշխավորման կամ նման այլ սխեմաներում (առկայության դեպքում):

10.2. Ընկերությունն իրավասու է անժամկետ օգտագործել հաճախորդների Միջոցները ի շահ իրեն, եթե այլ բան նախատեսված չէ Ընկերության և հաճախորդի միջև կնքված պայմանագրով/համաձայնագրով: Այդուհանդերձ Ընկերությունը պարտավորվում է Հաճախորդի առաջին

իսկ պահանջի դեպքում ապահովել այդ միջոցների հասանելիությունը Հաճախորդին:

10.3. Ընկերությունն իրավունք ունի անժամկետ գրավադրելու հաճախորդի միջոցներն իր անունից, եթե այլ բան նախատեսված չէ Հաճախորդի հետ կնքված պայմանագրով/համաձայնագրով: Այդուհանդերձ Ընկերությունը պարտավորվում է Հաճախորդի առաջին իսկ պահանջի դեպքում ապահովել այդ միջոցների հասանելիությունը Հաճախորդին:

10.4. Հաճախորդի միջոցներն Ընկերության կողմից օգտագործվելու դեպքում տոկոս չի վճարվում, եթե այլ բան նախատեսված չէ Սակագներով կամ Հաճախորդի հետ կնքված համաձայնագրով:

11. ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ, ՊԱՀԱՌՈՒԱԿԱՆ ԵՎ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

11.1. Հաճախորդի՝ Ծառայությունների մատուցման նպատակով օգտագործվող և դրանց մատուցման կապակցությամբ կնքված գործարքների արդյունքում ստացված Միջոցները Ընկերությունը ՀՀ օրենքներով, այլ նորմատիվ իրավական ակտերով, հաշվարկային համակարգի օպերատորի և կարգավորվող շուկայի օպերատորի կանոններով, սույն և Ընկերության Պահառության Կանոնակարգերով և Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում հաշվառում է Հաճախորդի Բրոքերային հաշվին:

11.2. Հաճախորդի՝ ծառայությունների մատուցման նպատակով օգտագործվող և այդպիսի մատուցման արդյունքում կնքված գործարքների արդյունքում ստացված դրամական միջոցների և/կամ ֆինանսական գործիքների առանձնացված հաշվառման նպատակով Բրոքերը Հաճախորդի համար բացում է Բրոքերային հաշիվներ (անհրաժեշտության դեպքում՝ առանձին արժույթներով):

11.3. Բրոքերը Հաճախորդի միջոցները հաշվառում և բրոքերային հաշիվները վարում է այնպիսի եղանակով, որը թույլ կտա ցանկացած պահի և առանց ուշացման

առանձնացնել յուրաքանչյուր Հաճախորդի միջոցները այլ Հաճախորդների, ինչպես նաև Բրոքերի սեփական միջոցներից:

11.4. Բրոքերային հաշվի մնացորդի դիմաց Բրոքերը Հաճախորդին տոկոսներ չի վճարում:

11.5. Բրոքերային հաշիվներով գործառնությունները կատարվում են Հաճախորդի Հանձնարարականների հիման վրա. ընդ որում, Հանձնարարականը հանդիսանում է համապատասխան չափով Բրոքերային հաշվով գործառնություն կատարելու Հանձնարարական:

11.6. Առանց Հաճախորդի Հանձնարարականի Բրոքերային հաշվից գումարներ դուրս են գրվում օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի հիման վրա, ինչպես նաև օրենքով կամ Հաճախորդի հետ Ընկերության կնքած պայմանագրերով սահմանված դեպքերում:

11.7. Ընկերությունն իրավունք ունի իր հայեցողությամբ մերժել Միջոցների մուտքագրումը Բրոքերային հաշիվ, եթե Ընկերության ներքին գնահատմամբ՝ հաշվի առնելով Հաճախորդի կողմից այդ Միջոցների օգտագործմամբ կնքվելիք (կնքման հնարավորություն ունեցող) Գործարքների բնույթը և ռիսկայնությունը՝ Բրոքերային հաշվում միջոցների առակայությունը կարող է հանգեցնել Հաճախորդի և (կամ) Ընկերության համար զգալի կորուստների:

11.8. Ընկերությունը Հաճախորդի Միջոցները կարող է պահել Անվանատիրոջ և իր կամ իր անունով այլ ֆինանսական հաստատություններում (այդ թվում՝ արտասահմանյան) բացված բանկային և դրամական միջոցների հաշվառման այլ հաշիվներում՝ ՀՀ կամ Գործարքի կնքման այլ վայրի օրենսդրության և դրան համապատասխան կնքված պայմանագրերի համաձայն: Ընկերությանը իրավունք է վերապահվում Գործարքներ կնքելիս միացնել Հաճախորդի միջոցները իր այլ հաճախորդների, ինչպես նաև իր սեփական միջոցներին՝ ամեն դեպքում, սակայն, պահպանելով իր և Հաճախորդի, ինչպես նաև իր տարբեր հաճախորդների միջոցների առանձնացված հաշվառումը ներքին հաշվառման (արտացոլման) համակարգի պատշաճ վարման միջոցով:

11.9. Բրոքերային ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ պահառուական և վճարահաշվարկային գործողությունների, Հաճախորդի

հաշիվներով գործառնությունների կատարմանկարգերը սահմանվում են համապատասխանաբար Պայմանագրով, Պահառուական ծառայությունների մատուցման Կանոնակարգով, սույն կանոնակարգով և Ընկերության այլ ներքին իրավական ակտերով:

11.10. Բրոքերային ծառայություններից օգտվող Հաճախորդներինն Ընկերությունը մատուցում է նաև պահառուական ծառայություններ առանց Պահառուական ծառայությունների մատուցման Կանոնակարգով սահմանված արժեթղթերի հաշիվների բացման, իսկ այդ դեպքում պահառուական բոլոր գործառնությունները կատարվում են Հաճախորդի Բրոքերային հաշվի միջոցով:

11.11. Հաճախորդի կողմից Ընկերությանը սույն Կանոնակարգին համապատասխան տրված՝ Գործարք կատարելու Հանձնարարականը հանդիսանում է նաև Հաճախորդի Բրոքերային հաշիվներով համապատասխան Պահառուական գործառնություն կատարելու հանձնարարական, մասնավորապես՝

1) Արժեթղթերի ընդունում/մուտքագրում հաշվին,

2) Արժեթղթերի փոխանցում/ելքագրում հաշվից:

11.12. Ընկերությունը Վերջնահաշվարկն իրականացնում է առանց Հաճախորդից լրացուցիչ Հանձնարարականներ ստանալու: Կողմերը համաձայնում են, որ Հանձնարարականը ինքնաբերաբար հանդիսանում է նաև Հաճախորդի Միջոցներով Վերջնահաշվարկ կատարելու Հանձնարարական:

11.13. Հաճախորդը պարտավոր է ապահովել Ընկերությանը Վերջնահաշվարկի համար անհրաժեշտ Միջոցներով՝ սույն Կանոնակարգին համապատասխան Հաճախորդի հաշվում համապատասխան Միջոցների առկայությունը ապահովելով:

12. ՊԱՏՎԵՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

12.1. Ընկերության Պատվերների կատարման քաղաքականությունը հաստատվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից (եթե Ընկերությունում խորհուրդ չի ձևավորվել):

12.2. Ընկերության Պատվերների կատարման քաղաքականությունը ներառում է տեղեկատվություն գործարքների կնքման տարբեր վայրերի, միջոցների մասին, ինչպես նաև այն գործոնների մասին, որոնք հաշվի են առնվում այդ վայրերի միջև ընտրություն կատարելիս՝ ըստ արժեթղթերի յուրաքանչյուր դասի:

12.3. Նախքան Պայմանագիր կնքելը Ընկերությունը հաճախորդներին տեղյակ է պահում Պատվերների կատարման քաղաքականության մասին և, վերջիններս ստորագրելով Պայմանագիրը տալիս են իրենց համաձայնությունն այդ քաղաքականությունն իրենց նկատմամբ կիրառելու վերաբերյալ:

12.4. Ընկերությունը վերանայում է Պատվերների կատարման քաղաքականությունը այն դեպքում, երբ կատարվել է այնպիսի զգալի փոփոխություն, որն այլևս հնարավորություն չի տալիս այդ քաղաքականության համաձայն ընտրված գործարքների կնքման վայրի միջոցով կատարել հաճախորդի Պատվերները հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով:

13. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ

13.1. Պայմանագրի, Կանոնակարգի և Ծառայությունների մատուցման շրջանակներում Կողմերի միջև ցանկացած գործառնությունների և հանձնարարականների, ինչպես նաև ցանկացած տեղեկատվության /ներառյալ՝ հաղորդագրության, փաստաթղթերի, ծանուցումների, քաղվածքների, հաշվետվությունների/ ներկայացում, փոխանցում, փոխանակում, այդ թվում ցանկացած հաղորդակցում կապված Պայմանագրից/Կանոնակարգից բխող ցանկացած պահանջի կամ այլ հարցերի հետ /բոլորը միասին այսուհետ նաև ծանուցում/, կատարվում է էլեկտրոնային եղանակով՝ Հաճախորդի կողմից Բրոքերին ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեի և/կամ «Էփրիքոք Կապիտալ» ՓԲԸ Իմ հաշվը մոդուլի միջոցով ու համաձայնեցված լեզվով, եթե այլ պարտադիր պայման նախատեսված չէ Պայմանագրով/Կանոնակարգով համաձայն և/կամ Բրոքերի պաշտոնական կայքէջում հրապարակելու միջոցով:

13.2. Հաճախորդը համարվում է պատշաճ ծանուցված, երբ ծանուցումն ուղարկվել է Հաճախորդի կողմից տրամադրված էլեկտրոնային փոստին և առկա է այն

ուղարկելու մասին էլեկտրոնային հավաստում, եթե նույնիսկ բացակայում է այն կարդալու մասին հավաստումը. այս դեպքում Հաճախորդը համարվում է պատշաճ ծանուցված Ընկերության կողմից ծանուցումն ուղարկելու պահից, և/կամ Իմ հաշիվը մոդուլի միջոցով, որի դեպքում հաճախորդն համարվում է պատշաճ ծանուցված այն ուղարկելու հաջորդող օրվանից, և/կամ Բրոքերի պաշտոնական կայքէջում հրապարակելու միջոցով, որի դեպքում Հաճախորդը համարվում է պատշաճ ծանուցված հրապարակման հաջորդ օրվանից: Ընդ որում, Պայմանագրով/Կանոնակարգով նախատեսված ծառայությունների մատուցման շրջանակներում բոլոր ծանուցումներն ուղարկվում են Բրոքերի՝ brokerage@apricotcapital.am էլեկտրոնային փոստի հասցեի և/կամ Իմ հաշիվը մոդուլի միջոցով:

13.3. Հաճախորդի կողմից Բրոքերին էլեկտրոնային հասցե չտրամադրելու և/կամ տրամադրված էլեկտրոնային հասցեն չգործող կամ թերի լինելու դեպքում Հաճախորդի հետ հաղորդակցումը կատարվում է Իմ հաշիվը մոդուլի և/կամ Հաճախորդի կողմից Բրոքերին տրամադրված հեռախոսահամարին կարճ հաղորդագրությամբ (sms) տեղեկացում ուղարկելու և Բրոքերի գրասենյակի տարածքում այդպիսի տեղեկատվությունը առձեռն ստանալու հնարավորության մասին տեղեկացնելու միջոցով, անկախ այն հանգամանքից Հաճախորդը մոտեցել և ստացել է տեղեկատվությունը, թե ոչ: Ընդ որում, Հաճախորդը գիտակցում է, որ Պայմանագրի շրջանակներում ներկայացված ցանկացած ծանուցում համարվելու է Հաճախորդի կողմիցպատշաճ ստացված, անգամ եթե Հաճախորդը փաստացի չի ստացել այդ ծանուցումը Բրոքերին տրամադրված հեռախոսահամարի թերի կամ անջատված կամ կամ որևէ այլ պատճառով անհասանելի լինելու կամ Պայմանագրով սահմանված կարգով տվյալների թարմացման պարտավորությունը Հաճախորդի կողմից կատարված չլինելու արդյունքում սխալ հեռախոսահամարին ուղարկելու բոլոր դեպքերում:

14. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

14.1. Կողմերը պատասխանատվություն են կրում Պայմանագրով և սույն Կանոնակարգով ստանձնած իրենց պարտականությունների չկատարման կամ

ոչ պատշաճ կատարման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

14.2. Կողմերը պատասխանատվություն են կրում Կանոնակարգի 3-րդ գլխում նշված իրենց երաշխիքների և հավաստիացումների արժանահավատության համար և պարտավոր են հատուցել մյուս կողմին այդպիսի երաշխիքների և հավաստիացումների՝ իրականությանը չհամապատասխանելու արդյունքում պատճառված վնասը: Կողմերը ազատվում են սույն պայմանագրով իրենց պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե դրա պատճառ է հանդիսացել մյուս կողմի՝ Կանոնակարգի 3-րդ գլխում նշված երաշխիքների և հավաստիացումների իրականությանը չհամապատասխանելը: Յուրաքանչյուր կողմ պարտավորվում է հատուցել երրորդ կողմին պատճառված ցանկացած վնաս, եթե այդ վնասը առաջանալու պատճառներից է հանդիսացել Կանոնակարգի 3-րդ գլխում նշված երաշխիքների և հավաստիացումների՝ իրականությանը չհամապատասխանելը:

14.3. Բրոքերը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց, այդ թվում՝ գործարքների կնքման գործընթացում Բրոքերի կողմից ներգրավված Գործակալների (ենթակոմիսիոներների) և կամ Հաճախորդի միջոցները հաշվառելու համար որպես պահառու ընտրված անձանց, Գործարքների հակառակ կողմի անվճարունակության կամ սնանկության, ինչպես նաև վերջիններիս կողմից գործարքներով, այդ թվում՝ արժեթղթերի փոխանցման հանձնարարականներից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, հետևանքով Հաճախորդին պատճառված վնասի համար, եթե չգիտեր և չէր կարող իմանալ նշված հանգամանքների առկայության կամ անխուսափելիության մասին՝ վերջիններիս հետ պայմանագրային հարաբերություններ հաստատելիս:

14.4. Հաճախորդի Հանձնարարականներով կատարված գործարքների մյուս կողմի կողմից այդ գործարքով իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու ռիսկը կրում է Հաճախորդը, իսկԲրոքերը հավաստում է, որ լավագույն ջանք կգործադրի՝ պատշաճ կատարում պահանջելու համար, սակայն նշվածի վերաբերյալ սույնով ոչ մի երաշխիք չի տալիս և պարտավորություն չի ստանձնում: Սույնով կողմերը հավաստում են, որ հաշվի առնելով այն, որ Հանձնարարականների կատարումը Հայաստանի

Հանրապետությունից դուրս տեղի է ունենում կարգավորված շուկաներում՝ հիմնականում Գործակալների և հաջորդականորեն նրանց ենթագործակալների շղթայի միջոցով և այդպիսի Գործակալների և ենթագործակալների կողմից, որ Բրոքերը Հաճախորդի Հանձնարարականները միայն փոխանցում/հաղորդում է Գործակալներին ի կատարում, որոնք իրենց հերթին այն կարող են նույնպես ի կատարում փոխանցել իրեն ենթագործակալներին և Բրոքերը նման պայմաններում հնարավորություն չունի շրջահայացություն ցուցաբերել այդպիսի ենթագործակալ անձանց ընտրության հարցում, Բրոքերը ազատվում է Հանձնարարականի հիման վրա կնքված գործարքներով երրորդ անձանց կողմից իրենց պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվությունից: Սույնով Կողմերը համաձայնվում են, որ Բրոքերը համարվում է պատշաճ շրջահայացություն չցուցաբերած միայն այն դեպքում, երբ Հանձնարարականները կատարող կամ հաղորդող Գործակալներին ընտրելու/հնարավորություն ունենալով՝ ընտրել է այնպիսի անձ, որի սնանկության/անվճարունակության կամ դրա անխուսափելիության մասին տեղյակ է եղել ինքը՝ այդպիսի ընտրություն կատարելիս:

14.5. Բրոքերը ձեռնարկվում է հետևյալ ողջամիտ քայլերը Հաճախորդին/նրա անունից հանդես եկող անձին նույնականացնելու և/կամ նրանց լիազորությունները ստուգելու նպատակով՝

1) հեռախոսային եղանակով ներկայացված Հանձնարարականի դեպքում՝ Պայմանագրով Հաճախորդի հետ համաձայնեցած հեռախոսահամարին և/կամ էլ. փոստին ուղարկված մեկանգամյա օգտագործման ծածկագրի համապատասխանություն, անհնարինության դեպքում՝ Հաճախորդի ինքնության ստուգում և նույնականացում Բրոքերի ներքին իրավականակտերով սահմանված կարգով:
2) թղթային եղանակով ներկայացված Հանձնարարականի դեպքում՝ Հանձնարարականի վրա զետեղված ստորագրության և կնիքի համապատասխանություն /բավարար չափով նմանություն/ Հաճախորդի և/կամ նրա անունից հանդես գալու իրավասություն ունեցող անձի ստորագրության և կնիքի հետ /առկայության դեպքում/,
3) էլեկտրոնային եղանակով ներկայացված Հանձնարարականի դեպքում՝ Հանձնարարականի ուղարկման էլեկտրոնային փոստի հասցեի

համապատասխանություն Պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեի հետ,

4) Իմ հաշիվը մոդուլի միջոցով ներկայացված Հանձնարարականի դեպքում՝ Իմ հաշիվը համակարգ մուտք գործելու համար անհրաժեշտ երկքայլանի նույնականացման/ստուգման ապահովում, այդ թվում՝ մուտքանվան ու գաղտնաբառի համապատասխանություն:

14.6. Բրոքերը պատասխանատվություն չի կրում ԱՀ-ների գործողությունների կամ անգործության արդյունքում, ինչպես նաև գործարքի կողմ հանդիսացող անձանց կողմից Հաճախորդի Միջոցներով վերջնահաշվարկի չկայացման կամ ոչ պատշաճ իրականացման համար՝ անկախ դրա պատճառներից, ինչպես նաև ցանկացած բնույթի տեխնիկական խափանումների (այդ թվում այն դեպքերում, երբ ծառայությունները մատուցվում են Հաճախորդին Համակարգերի միջոցով և տեղի է ունենում համակարգի ցանկացած տեխնիկական խափանում) արդյունքում Հաճախորդին պատճառված վնասի համար, եթե չի ապացուցվում որ այդպիսի խափանումները և վնասը տեղի են ունեցել Բրոքերի դիտավորությամբ տեղի ունեցած գործողությունների արդյունքում:

14.7. Բրոքերը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կրած այն վնասների համար, որոնք առաջացել են Բրոքերի մոտ Հանձնարարականները կատարելու կամ ի կատարում փոխանցելու փաստացի անհնարինության իրավիճակ առաջանալու դեպքում՝ ցանկացած (այդ թվում՝ Բրոքերի բացառիկ, լիարժեք և ամբողջական վերահսկողության ներքո չգտնվող և երրորդ անձանց և արտաքին միջավայրի հետ կապված հանգամանքներով պայմանավորված) պատճառներով:

14.8. Ցանկացած դեպքում Բրոքերի պատասխանատվությունը Հաճախորդի առջև սահմանափակվում է դիտավորություն կամ ակնհայտ անփութություն ցուցաբերելու արդյունքում՝ Հանձնարարականների խախտմամբ գործարքներ կնքելու և սույն պայմաններով սահմանված համապատասխան իրավական հիմքերի բացակայության դեպքերում Հանձնարարականը չկատարելու դեպքերով և նրան պատճառված իրական վնասի չափով:

14.9. Հաճախորդը պարտավորվում է հատուցել Բրոքերի կրած ցանկացած վնաս, որը արդյունք է հանդիսացել Պայմանագրի և սույն Կանոնակարգի համաձայն Բրոքերի կողմից Հաճախորդին ծառայությունների մատուցման

շրջանակներում երրորդ անձանց կողմից Բրոքերին ներկայացված պահանջների բավարարման: Հաճախորդը ազատվում է պատասխանատվությունից միայն այն դեպքում, եթե այդպիսի պահանջների հիմք են հանդիսացել Բրոքերի՝ Հաճախորդի գործողություններով, այդ թվում՝ Հանձնարարականներով չպայմանավորված անիրավաչափ գործողությունները:

14.10. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Պայմանագրի իմաստով անհաղթահարելի ուժի արդյունք հանդիսացող իրավիճակներ են համարվում տարերային աղետները, վթարները, հրդեհները, զանգվածային անկարգությունները, գործադուլները, ռազմական գործողությունները, Պայմանագրում նշված գործունեության տեսակները ուղղակիորեն կամ անուղղակի ձևով արգելող և Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունների կատարմանը խոչընդոտող օրենսդրական և նորմատիվ ակտերի, պետական մարմինների որոշումների (հրամանների) օրինական ուժի մեջ մտնելու փաստերը, կամ Կողմերի կամքից անկախ այլ իրադարձությունները:

14.11. Պայմանագրի այն Կողմը, որը չի կարող կատարել իր պարտականությունները՝ կապված անհաղթահարելի ուժի ազդեցության հետ, պարտավոր է այդ մասին, անհաղթահարելի ուժի ազդեցության ի հայտ գալու պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, էլեկտրոնային կապի միջոցներով հայտնել մյուս Կողմին և կատարել բոլոր անհրաժեշտ գործողությունները, որպեսզի նվազեցվեն Կողմերի կրած վնասները:

14.12. Կանոնակարգի 14.11 կետում նշված պայմանի չկատարման դեպքում Կողմերը կորցնում են իրենց իրավունքը նման պայմանների վկայակոչման համար:

14.13. Անհաղթահարելի ուժի աղդեցության վերացումից հետո Կողմերը շարունակում են Պայմանագրով/Կանոնակարգով նախատեսված իրենց պարտավորությունների կատարումը:

15. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՎՈՂ ԻՐԱՎՈՒՆՔԸ

15.1. Բրոքերի և Հաճախորդի միջև Պայմանագրի և/կամ Կանոնակարգի գործողության կապակցությամբ առաջացած վեճերը ենթակա են լուծման ՀՀ իրավասու դատարանների կողմից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Պայմանագրի Կանոնակարգի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

16. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵԼԸ

16.1. Սույն Կանոնակարգը, լինելով Պայմանագրի անբաժանելի մասը, Հաճախորդի համար ուժի մեջ ենմտնում վերջինիս կողմից Պայմանագրի ստորագրման պահից և գործում են մինչև Պայմանագրով կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմքերով դրա գործողության դադարումը: Բոլոր դեպքերում, սակայն, Պայմանագիրը շարունակում էգործել ընդհուպ մինչև Պայմանագրով Կողմերի ստանձնած պարտավորությունների և պարտականությունների լրիվ և պատշաճ կատարումը՝ նշված պարտավորությունների մասով:

16.2. Պայմանագիրը կարող է լուծվել Բրոքերի և Հաճախորդի նախաձեռնությամբ՝ մյուս կողմին այդ մասինառնվազն 10/տասը/ օր առաջ ծանուցելու պայմանով:

16.3. Պայմանագրի ցանկացած հիմքով լուծման դեպքում Բրոքերն ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում ապահովում է Հաճախորդի Բրոքերային հաշիվների փակումը, ինչպես նաև Հաճախորդի արժեթղթերի և/կամ դրամական միջոցների վերադարձը վերջինիս՝ նշված արժեթղթերը և/կամ դրամական միջոցները Հաճախորդի կողմից նշված /արժեթղթերի/ հաշիվներին փոխանցելու միջոցով: Սույն կետով նախատեսված հանձնարարականները/ցուցումները Հաճախորդը պարտավոր է տալ Պայմանագրի լուծումից կամ այլ հիմքով դադարումից առնվազն 2 /երկու/ աշխատանքային օր առաջ և վճարել այդ հանձնարարականի կատարման համար: Սահմանված ժամկետներում Հաճախորդի կողմից համապատասխան հանձնարարական չներկայացնելու դեպքում արժեթղթերը ենթակա են

իրացման դրանց շուկայական իրացվելի գնով, որից ստացված գումարը փոխանցվում է Հաճախորդի՝ Բրոքերի մոտ բացված ընթացիկ կամ այլ բանկային հաշվիններից ցանկացածին՝ Բրոքերի հայեցողությամբ:

16.4. Եթե Պայմանագիրը լուծվել է Հաճախորդի նախաձեռնությամբ, վերջինս պարտավոր է հատուցել Բրոքերին Կանոնակարգի 8.3 կետով նախատեսված ու մինչև Պայմանագրի լուծման պահն առաջացած ցանկացած և բոլոր ծախսերը, ինչպես նաև Պայմանագրի լուծման հետևանքով Կանոնակարգի 16.3 կետի համաձայն անհրաժեշտ դարձած գործողությունների հետ կապված բոլոր ծախսերը:

17. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

17.1. Սույն Կանոնակարգով սահմանված կարգով հաճախորդին տրամադրվող տեղեկատվությունը, հաճախորդից պահանջվող տեղեկությունները, հաճախորդի կողմից ներկայացվող Պատվերները և հաճախորդներին ներկայացվող հաշվետվությունները կարող են լինել հայերեն, իսկ հաճախորդի ցանկության դեպքում՝ այլ լեզուներով (անգլերեն, ռուսերեն):

17.2. Սույն Կանոնակարգի փոփոխությունները և լրացումները հաստատվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից (եթե Ընկերությունում խորհուրդ չի ձևավորվել) և ուժի մեջ են մտնում ժողովի կողմից հաստատման պահից:

17.3. Սույն Կանոնակարգի բոլոր փոփոխությունները և լրացումները հանդիսանում են սույն Կանոնակարգի անբաժանելի մասը:

17.4. Սույն Կանոնակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են Բրոքերի կողմից միակողմանիորեն՝ այդպիսի փոփոխությունից կամ լրացումից հետո փոփոխության/լրացման մասին Հաճախորդին ծանուցելու պայմանով: Հաճախորդի համար տվյալ փոփոխությունն ուժի մեջ է մտնում փոփոխության մասին ծանուցելու և/կամ Բրոքերի պաշտոնական ինտերնետային կայքում Կանոնակարգը հրապարակելու օրվան հաջորդող 11-րդ օրը:

17.5. Իմ հաշիվը մոդուլի միջոցով՝ համակարգ մուտք գործելու համար անհրաժեշտ երկքայլանի նույնականացման/ստուգման ապահովմամբ, այդ թվում՝ մուտքանվան ու գաղտնաբառիհամապատասխանությամբ, Հաճախորդի

կողմից հաստատելու և/կամ Հաճախորդի հաղորդակցման հանձնարարականով սահմանված էլեկտրոնային փոստի միջոցով Հաճախորդի կողմից տրված ցանկացած և բոլոր հաստատումները, համաձայնությունները, ծանուցումները, Գործառնությունները և Հանձնարարականները համարվում են Հաճախորդի կողմից պատշաճ ներկայացված ու նույնականացված, իսկ նման կարգով ստացված հաստատումները, համաձայնությունները, ծանուցումները, Գործառնությունները և Հանձնարարականները, ինչպես նաև ցանկացած այլ փաստաթղթերը /ներառյալ՝ Պայմանագիրը/ ունեն նույն իրավական նշանակությունը, ինչ դրանց՝ Հաճախորդի կողմից ձեռագիր ներկայացվելու դեպքում:

Հավելված 1

Գործարքի իրականացման հանձնարարական
N _____

Հաճախորդի բրոքերային հաշվի համարը	
Պատվերի ստացման ժամանակը *(ժամ/րոպե/օր/ամիս/տարի)*	
Գործարքի տեսակը	☐ Առք ☐ Վաճառք
Պատվերի բնույթը, եթե պատվերում նշված գործարքի տեսակը առք կամ վաճառք չէ	☐ Արժեթղթերի բաժանորդագրություն ☐ Օպցիոնի իրականացում ☐ Նշել այլ բնույթ
Պատվերի տեսակը	☐ Ծուկայական ☐ Լիմիտային ☐ Ստոպ ☐ Ստոպ լիմիտային
Լիմիտային գին (արժույթ)	
Ստոպ գին (արժույթ)	
Հանձնարարականն ուժի մեջ է մինչև	☐ Առևտրային նստաշրջանի ավարտը (DAY) ☐ Կասեցումը (GTC) ☐ Նշված ամսաթիվը (GTD) _____
Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը)	
Բորսայական հապավում (սիմվոլ)	
Ֆինանսական գործիքի քանակ (ծավալ)	
Առանձն ահատուկ ցուցումներ (առկայության դեպքում)	
Հանձնարարականը ստորագրող անձի՝ ---------- (անուն, ազգանուն) ---------- (Ստորագրություն) Կ.Տ.	Հանձնարարականը ընդունեց՝ _____ (անուն, ազգանուն) ---------- (Ստորագրություն)